կուելով էվոլիւցիօնի զարգացմանը, քայքայւում է, վերափոխուելով ընտանեկան կազմի նոր ձևերին, որոնք աւելի մօտ են ու նման ժամանակակից ընտանեկան դրութեանը։ Այստեղ զարգանում է ամուսնական յարաբերութիւնների տևողութիւնը, ուրեմն և հօր անձնաւորութեան մշտական ներկայութիւնը։ Ամուսինն, իբրև կնոջ ապաւէն, և միևնոյն ժամանակ իբրև հայր, օժտուած որոշ իրաւունքներով իւր որդիների վերաբերմամբ, աստիճանաբար առաջ է բերում հայրիշխանութեան, նահապետական զերդաստանի գաղափարը։ Սակայն այդ մայրիշխանութեան լուծմամբ բնաւ չի վերանում նրան կցորդ այլացեղ ամուսնութեան սկզբունքը։ Այլացեղ ամուսնութեան սահմանափակման ոյժը տակաւին որոշ չափով շարունակում է պահպանուել զանազան սերունդների յարաբերութիւնների մէջ։ Ակներև է, որ առևանգումն ևս, որպէս այլացեղ ամուսնութեան կցորդ մի կարգ, մնում է իբրև կին ձեռք բերելու միակ միջոց։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ մայրիշխանութեան ու այլացեղ ամուսնութեան վերջին նշոյլներն անհետացել էին իրականութեան մէջ, առևանգումը շարունակել է իւր գոյութիւնը ամուսնական իրաւունքի մէջ, որպէս մի սովորութեական երևոյթ։ Յետագայում առևանգումը դառել է արդէն մի տեսակ մեռած ձևականութիւն, որ արտայայտւում է հարսանիքի ու պսակադրութեան ժամանակ յատուկ սիմբոլական գործողութիւնների մէջ։

Արդ դառնանք բուն նիւթին և առաջ բերենք այն փաստերը, որոնք կը ծառայեն մեզ իբրև ապացոյց, թէ հայկական կեանքումն էլ առևանգումը գոյութիւն է ունեցել որպէս մի իրական երևոյթ։

II.

Մովսէս Խորենացին պատմելով Ալանների արշաւանքը հայոց վրայ, յիշատակում է, որ Արտաշէս Բ., տեսնելով Ալանների գեղեցիկ իշխանաղնուհուն, սիրեց նրան ու

Հայ մատենագրության թուանշային գրադարան